



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Արովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. hmayg@abovyan.kotayq@mta.gov.am

9-ը մայիսի 2023թ.

Արովյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի շնորհավորական ուղերձը
մայիսի 9-ի՝ Հաղթանակի ու խաղաղության օրվա առիթով

Մայիսի 9-ը հայ ժողովրդի պատմության մեջ եռատոն հիշատակվող ամենից պատվաբեր ու փառապանծ ամսաթվերից է. տասնամյակներ շարունակ այս օրը նշել ենք Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի, հայոց բերդաքաղաք Շուշիի ազատագրման և Արցախի պաշտպանության բանակի կազմավորման տարեդարձի օր:

Հայրենական մեծ պատերազմի հարգարժան վետերաններ, Արցախյան ազատամարտի մասնակիցներ.

Անկախ ստեղծված իրավիճակից՝ մայիսի 9-ը ձեր օրն է, դուք մղել եք շնորհակալության, հարգանքի ու գնահատանքի արժանի, ազնիվ ու արդար պայքար:

44-օրյա պատերազմի կորուստները, ցավալի ելքն ու գեղատեսիլ Շուշի քաղաքի անկումը զգալիորեն փոխել են մայիսի 9-ի խորհուրդն ու տրամադրությունը:

Սրանով հանդերձ այսօր, առավել քան երբևէ, մենք վիատվելու իրավունք չունենք և պարտավոր ենք թշնամու դեմ պայքար մղել ռազմական, կրթական, տեղեկատվական և հևարավոր բոլոր հարթակներով՝ բարձրաձայնելու համար պատմական արդարության վերականգնման, արցախահայության ինքնորոշման և սեփական հայրենիքում ազատ ու անկախ ապրելու իրավունքի մասին:

Արդեն երեք տարի Հաղթանակի և խաղաղության օրը մենք դիմավորում ենք ոչ թե եռատոնի ցնծությամբ, այլ ողջամտորեն ու խոնարհումով: Այս նվիրական օրը՝ մայիսի 9-ը մեզ պարգևած հայորդիների սիրանքն անուրանալի է: Իմ խորին հարգանքն ու խոնարհումն են հայտնում Հայրենական մեծ պատերազմի, Արցախյան բոլոր ազատամարտերի նահատակների հիշատակին. ձեր անունն անմահ է, ձեր գործը՝ փառավոր:

Սիրելի՛ հայրենակիցներ.

Մենք միասնաբար պետք է հաղթահարենք հետպատերազմյան դժվարությունները, կորստի ցավը և ողջամտորեն առաջնորդվենք ազատագրական պայքար մղած հայորդիների հայրենասիրական ոգով ու ամուր կամքով:

Նոր եռատոն կերտելու տեսլականով ու անսահման հավատով՝ սերունդների համար պիտի ուղենիշ դառնա մեր հերոսների պատգամն ու հայոց փառահեղ անցյալը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ